

ՍԻՈՆ

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 10.

ԱՄՍԱԳԻՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀԵՐՔՈՒՄՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Հ. Մ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑԻ

ՀԱՅՐԵՆԻՔ անուն լրագրոյն 163, 64, 65, և 66. թուոց մէջ շարունակեալ քննադատութիւն մի երեւեցաւ Ս. Աթոռոյս տպարանէն 'ի լոյս ընծայուած Ս. Վ. Մուրատեանցի Եկեղեցական պատմութեան վերայ։

Քննադատութեան ոճն ու լեզուն արդէն մասնեց հեղինակը, որոյ ոգին մեզ ծանօթ լինելով թերեւս չը պատասխանէինք, մանաւանդ որ քննադատը տեղ տեղ ինքնին կը հերքէ իւր խօսքերը, այլ քանզի իւր այդ գործով ոմանց պարզամտաց գայթակղութիւն տուած կրնայ լինել, կը փութամք հերքել յօգուտ հաստատութեան։

Ցաւալի է որ Երուսաղէմայ խմբագրին ալ հանդերձ իւր ծերութեամբը տակաւին չը հասկցաւ որ կրօնքն ու ազատութիւնը մարդուս միտքը կը խաւարեցնէ. և ուղիղ դատողութիւնը կը չփոթէ, ուստի Երժ. Ս. Վ. Մուրատեանցի վերայ, մանաւանդ ազատութիւն ունենալուն համար փութացեր է այնպիսի գայթակղեցուցիչ և անքարեպաշտ յօդուած մի իւր էջերուն մէջ վերստին օրինակել. առաւ ալ գոհ չը լինելով իւր ատելութեան կրից անձնացով խնդիրը ծանր կը տեսնէ և քննադատութեան հիմնական կամ անհիմն լինելոյ որոշումը ամենայն

Հայոց մեր(*) Վ. Կաթուղիկոսի և Ս. Սինոդին կը թողու:

Մենք կը յորդորեմք զնորին մեծապատուութիւնը որ չանձնարարէ այդպէս. քանզի խնդիրն իւր կարծածին չափ ծանր չէ, այլ կրից փոքր մի է անփորձ պատանիէ մի ցուցուած, զոր ձըր մարտութեան հովմը կը ցրուէ. Եթէ Արշալոյս մարդավարութեամբ և քրիստոնէական զգուշութեամբ մտնէր իւր սրտի խորը, մաքրէր այն անդէն ամեն աղտերն ու բիծերը և գգուէր քրիստոնէութիւնը եւ ճանչնար Հայաստանեայց Եկեղեցին, յայնժամ ինքնին նոյն քննադատութեան անհիմն լինելոյն որոշումը պիտի տար, և հարկ չպիտի մնար ամենայն Հայոց մեր Վ. Կաթուղիկոսին և Ս. Սինոդին գլխացաւութիւն տալ. որոց արդէն Եկեղեցական պատմութիւնը տպուած ատեն օրինակ մի ղրկուած է և մէկ տարի եղած է, եթէ քննադատութեան հարկ տեսնուէր՝ մինչեւ ցարդ կը քննադատուէր: Արդէն այն քննադատին այսպէս անժամանակ երեւիլը կը յայտնէ որ ուղիղ հոգիէ թելադրուած չէ:

Նոյն իսկ Արշալոյս ալ գիտէ, որ ինքն ոմանց նախանձոտաց ամբաստանութեան պատճառաւ նկատողութիւն ըրած էր, և ժամանակին իրեն ալ ղրկուած է նոյն գիրքը որ տեսնէ թէ այն ամբաստանութիւնները հիմնաւո՞ր էին թէ անհիմն:

Միթէ Արշալոյս լուծեալ Սարկաւագի մը չափ ալ հաւատք չունէր. պատանեկի մը չափ ալ Հայ-Եկեղեցւոյ անդամ չէր որ այն ատենէն ցարդ գիտողութիւն մի չըրաւ և այժմ մինչեւ Մայր Աթոռոյ որոշման յանձնելու չափ ծանր կը գտնէ. ասկէց Արշալուսոյ ոգին ալ կը հասկցուի:

Իսկ մեք 'ի շինութիւն գայթակղեալ մտքերու կըսկսանիմք կարճ 'ի կարծոյ հերքել. ընդ նմին և կը փութամք հանդարտութեամբ և եղբայրական սիրով խրատել մեր քննադատը. կ'աղօթեմք մանաւանդ որ թերեւս ճշմարտութիւնը ճանչնալու համար Աստուած առաջնորդութիւն տայ եւ ազատեցնէ զինքը սատանայի որոգայթներէն, յորոց բռնուած է իւր անհնազանդութեամբ եւ կամապաշտութեամբ:

Գ. քննադատը իւր անհմուտ եւ անքարեպաշտ խօսքերուն՝ ճշմարտութիւնը պատրուակ բռնելով կըսկսի և բուն խօսքին սկիզբէն իւր ոգին կը յայտնէ. քանզի կերեւի թէ՝ ըստ գրոց նոյն գրքին փոքրիկ գովեստ ալ իրեն ծանր նստած է. նա մեծ զարմանօք եւս կը զարմանայ թէ ինչպէս մի քանի վարժապետք զայն կը գործածեն իբր անսխալ դասագիրք: Բայց խիստ մեծ պիտի լինի իւր զարմանքը, երբ գիտնայ որ կանխապէս այն գրքին ձեռագիրն արդէն ընդունուած կը դասախօսուէր բարձր Վարժարանի մի մէջ ընդ տեսչութեամբ բարձրաստիճան եւ քննելու բաւականութիւն ունեցող Եկեղեցականի մի:

Աւելին բաւել է թէ քննուած և արժանաւոր գտնուած է քանի որ այն ատեն և այժմ ընդունուած է և դաս կը տրուի:

Քննադատին այս յառաջաբանին մէջ ըրած բանաստեղծական ճիգերն մէկդի թողունք և անցնինք բուն խնդրոյն. այս տեղ միայն այսչափ ըսեմք, որ այսօր ալ Հայաստանեայց Կաթուղիկէ Առաքելոց Եկեղեցին նոյն գրքով, իբր նոր զէնքով կը պատերազմի թէ Յունական թէ Փապական և թէ

(*) Չենք գիտեր թէ Արշալոյս այս Մեր բառն ինչու աւելցուցած է. . . . :

Բողոքական եկեղեցեաց տանելութե՛ և անհնազանդութե՛ և մոլորութեանց դէմ. և թէ կը յանդիմանէ իւր ծոցոյն մէջ անոր և իւր հացին աղրող մեր քըննադատին նման խումբ մի գայթակղեցուցիչ օտարամիտ զաւակները. Հայրենասիրական եւ կրօնասիրական եռանդեամբ կը խրատէ և կը կշտամբէ զանոնք, որք իբրեւ Հայ եւ իբրեւ անդամ եկեղեցւոյ չեն հնազանդիր Եկեղեցւոյն, չեն ուզեր ծառայել, օգնել և սեպհական գործերն խոյս կը տան: Ինքնագլուխ և ազատ լինել կը կամին Եկեղեցիէն, որ ծառայ լինին իրենց կրից, մեղաց և մոլութեց. որք ոչ միայն կը պախարակեն Եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեաները, այլ և կանոնադէն զիրենք հոգեւորէս ծնող Հայրերը և յանցանց կը քերեն նոցա Հայրական խրատները, կը մերժեն եղբայրութիւնը և ճշմարիտ ու քրիստոնէական բարեկամութեան սէրը. որք կը փախչին չարաչար և ուղղուիլ չուզելով հանապազ յանցանքէ 'ի յանցանս կը թաւալին: Այս նոյն գրքով այսպէս չարունակ պատերազմելով իւր արիւնալուայ ծոցոյն մէջ միշտ պիտի պատսպարէ Հայ ազգութիւնը:

Թող ազնուութեամբ կարդայ ամեն ոք բովանդակ գիրքը և իմ ասածիս պիտի վկայէ. մանաւանդ 101 երեսէն մինչեւ 128 երեսը ուշի ուշով թող կարդան, ուր մեր քննադատն ալ իւր պատասխանը պիտի առնու սա խօսքերով “Իսկ վերջինը (քրիստոնէութեան վերջին պատերազմը), ներքին էր. Թերակատար քրիստոնէութենէ կամ վայրապար հետազօտութենէ ծնունդ առած որ կը քայքայէր հաւատացելոց միութիւնը և խաղաղութեամբ կը սպառնայէր”:

Եթէ առանց հակառակութեան ուզէն դրդուելու սիրով կարդացուի, նոյն գիրքը ծայրէ 'ի ծայր լի է 'ի նպաստ քրիստոնէական եկեղեցւոյ խօսքերով. քրիստոնէական ընդայմամբ կարդալու եւ տեսնելու է թէ ինչպէս Եկեղեցին իւր վսեմութեամբը, սրբութեամբը և անարատութեամբը կը ներկայանայ մեզ. եւ ճանչնալու է թէ ո՞րք են մեր սուրբ Հայրերը եւ նոցա գրուածներն ու վարդապետութիւնքը, յորոց ոչ յապաւուած, ոչ երկարած և ոչ չ'հանուած կայ, այլ պատմական նկատողութիւն և գրուած: Տեսնել պէտք է, որ նոյն գրքով հեղինակը ոչ նոր ու անկախ եկեղեցի երազող է, ոչ գաղտնի յարձակում կընէ և ոչ ալ Եւրոպայէն վարձեալ է:

Արդեօք մեք եւ ազատութի՞ւն ունի՞ք ասելու թէ, եթէ եւրոպայէն վարձեալ մի կայ, այն ալ մեր քննադատն է, որ առանց գիտնալու Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութի՞ւը, իբր թէ արդէն ուրիշ Եկեղեցիէ մը կախեալ է, ուստի անկախ Եկեղեցի երազելը յանցանք է եղեր: Այլ նոյն գիրքը կը հաստատէ որ Հայաստանեայց սուրբ Եկեղեցին նոր չէ, ՀԻՆ Է. կախեալ չէ ուրիշ Եկեղեցիէ, այլ ԱՆԿԱԽ Է. ուստի և նոյն գիրքը, ոչ չար եւ ոչ քիչ բնաւ հակառակ չէ Հայաստանեայց ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ ուղիղ վարդապետութեան:

Մեր եղբայր քննադատը առաջին անգամ միութեան խորհրդոյն վերայ խօսելով իւր խօսուածքին ձեւովը գլացումն և բարեպաշտ ոգի չունենալը կը յայտնէ. նա չը գիտէր որ քրիստոնէական Եկեղեցին նիւթապաշտ չէ:

Յիսուս Քրիստոս հաւատացելոց մաքերը նիւթէն վեր բարձրացուց և ատոր համա՛ր էր որ Նիկոդեմոս վերստին ծննդեան խորհուրդը չէր հասկնար:

Մեր Տէրը աստուածային խորհրդոց՝ մարդկան մտքերը հասու ընելու համար արդարեւ խորհրդաւոր նիւթեր ներկայացուց, այլ ընդ նոքօք եղած փոխարար խորհրդոց յաւել ամէրեցուց, յորում է փրկութիւնն՝ մատուցեալ բանիւ և շնորհօքն Աստուածոյ և ընկալեալ 'ի մէնջ հաւատովք.

Եկեղեցւոյ Ս. խորհուրդք, բառ որում խորհուրդ, անշուշտ զգալի նշանաց վերայ կայացած են, որք անտեսանելի շնորհքը կը նշանակեն. ինչպէս են Մկրտութեան ջուրը, Հաղորդութեան հացն ու գինին. Դրոշմի սուրբ Միւռոնը. Կարգի ձեռնադրութիւնը աղօթքներն ու օծումը. Ամուսնութեան պսակն և ուրիշ խորհրդաւոր արարողութիւնները. Ապաշխարութեան խոստովանութիւնն ու արտասուօրինչ պատուէրները, և վերջին օծման մաղթանքներն ու օրհնութիւնները: Այսքա անտեսանելի շնորհաց տեսանելի և զգալի նշաններն են որք իրենց նշանակածները կը ներգործեն 'ի մեզ 'ի ձեռն հաւատոյ եւ խնդրուածաց: Խորհուրդք Եկեղեցւոյ՝ զմեզ սրբող սուրբ բաներու նշաններ են, որք իրենց մէջ սպրդնած ճշմարտութիւնը կը նշանակեն: Ուրեմն քրիստոնէից հաւատքը նշանին ներքին փոխարար խորհրդոյն վերայ է, իսկ արտաքին նիւթը, ձեւն ու արարողութիւնն է առաջադրութիւն, միջոց, առիթ, օրինակ և նշան, որովք կը հրաւիրուի և կընդունուի աստուածային շնորհքն ու փրկութիւնը: "Խորհուրդն է տեսանելի կերպ, կամ եղանակ, կամ ձեւ կամ ՆՇԱՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՇՆՈՐՀԱՑ". (Օգոս.) "Խորհուրդք Եկեղեցւոյ են ծէսք և արարողութիւնք ինչ յԱստուծոյ սահմանեալք, յորս միջնորդութեամբ ըզգալի ՆՇԱՆԱՑ ցուցեալ եւ սուեալ լինի արժանաւորն ընդունողաց՝ զօրութիւն և շնորհք աստուածային": (Մալլանդ). "Որ ոչ ծնցի 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն երկնից. զի այն որ զգեցեալ է զզգեստ մահու, զանիծից և զապականութեան և ոչ երբէք առեալ է զանեղծական նշանն, օտարոտի է և անծանօթ. քանզի չունի զնմանութիւն արքունական .... (Յոհան ոսկ):

Մեր կարեկցութեան արժանի քրիստոնեայ երբ մարմնոյ աչքը մարմնաւոր նիւթերու վերայ կը յառէ. և 'ի նոյանէ միայն փրկութիւն կը քաղէ, կը նշանակէ թէ չէ հասկցած տակաւին մաշտոցի մկրտութեան կանոնի մէջ յիշուած (հոգեւոր ջուր)ը և Քրիստոսի ասած ('ի Հոգւոյ ծնանիլ)ը.

Ահաւասիկ յայտնի կերեւի որ Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին ինչպէս կը հաւատայ, և փրկութիւնն ու շնորհքը յԱստուծոյ կըսպասէ, որ նոքօք կը շնորհէ մեզ. ինչպէս որ նա իւրն քննադատն ալ մաշտոցի մէջէն մկրտութեան բերած մի հատուածովն կը հաստատէ առանց գիտնալու, թէ՝ շնորհքը, մեղաց թողութիւնը, Սուրբ Հոգւոյն ընդունելութիւնը և Հօր Աստուծոյ որդեգրիլը՝ յԱստուծոյ կըսպասուի եւ հաւատքով կը խնդրուի եւ կընդունուի: Բայց քննադատը հակառակութեան և վայրապար հետազօտութեան մէջ հաւատք կը որոնէ, ուր գտնելիք չունի, ինչպէս որ չը գըտին և "ոչ ինչ շահեցան որք այնպէսըն գնացին":

Բարի հոգիէ թելադրուած չերեւիր մեր քննադատը երբ սա խօսքին մէջ աղանդաւորութիւն կը գտնէ. "Պատմական յիշատակարանք՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ առանձինն ոչինչ չեն աւանդեր քրիս-

տոնէական ներքին սովորութեանց մասին»։

Եթէ այս խօսքը աղանդաւորութիւն է, ուրեմն ինքն ինչ կասէ. Եթէ Գ. քննադատը ինքզինք Հայ-Եկեղեցւոյ պաշտօնեայ կը համարի և եթէ նպատակը բարի էր, թող ցոյց տար պատմական յիշատակարանաց մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ առանձինն բան մի ըսուած՝ նորա քրիստոնէական ներքին սովորութեան մասին, որով մեծ ծառայութիւն արած պիտի լինէր իւր պաշտպանել կարծած եկեղեցւոյն և ազգին, և որովհետև ինքն ևս չը պիտի կարողանայ ցոյց տալ, ուրեմն գրքին հեղինակը բողոքականաց նպաստաւոր ծառայութիւն արած չէ, այլ քրիստոնէական Եկեղեցւոյ նախնի վիճակը ստորագրած է ըստ իմաստից սուրբ գրոց և կարգադրութեան Առաքելոց, նոյն ժամանակի սովորութեանց համեմատ։ Այս առաքելական սովորութիւնք Հայաստանեայց եկեղեցւոյ մինչ ցարդ պահած լինելը գրքին հեղինակը քիչ մի վարը կը խոստովանի. բայց քննադատը այս տեղը տեսնել չուզեր որ ուրիշ տեղ հերքէ։ Բայց դու, բարեպաշտ ընթերցող. սանկ մոլորամիտներու տուած թիւր բացատրութենէ մի գայթակղիր. այլ ուղիղ նկատէ և տես որ հեղինակի նոյն տեղի նկարագրութիւնը որչափ սուրբ և որչափ կենդանի է, որ կը պատկերացնէ մեզ նախնի քրիստոնէական եկեղեցւոյ ներքին հրեշտակային սուրբ ու խաղաղ կեանքը. այն ատեն պիտի գիտնաս որ պատմութիւնը Պատմութիւն է, Կրօնագիտութիւն չէ. Աստուածաբանութիւն չէ. ոչ Մաշտոց է, ոչ Ժամագիրք, ոչ Շարական և ոչ այլ ինչ, բայց միայն պատմութիւն է. ինչ բան ու ինչ չափ որ պատմութեան կը վերաբերի զայն ու այնչափը պէտք է գրուի։

Գ. քննադատը Հաղորդութեան կենդանարար խորհրդոյն վերայ ևս խօսելով գրքին հեղինակը կը դատապարտէ. և որովհետև այս տեղ ալ խնդիրը բառի վրայ է, մեք ցոյց կուտանք որ բառը հաւատք չը գոյացներ։

Մեր նախնիք գործածեր են անխտիր օրինակ, յիշատակ առաջնորդութիւն. նոյնպէս գործութիւն տարբ և այլն բառեր, առանց երբէք խորհրդոց սրբազան զօրութեան վերայ տարակուսելու։ Բայց աղանդաւորք նոյն բառերը չարաչար գործածեր են եղեր. նոքա չեն հաւատար եղեր, մեզ ինչ փոյթ, նոքա ըստ որում աղանդաւոր, հարկաւ չը պիտի հաւատան։

Մինչ խորհրդաւորներէն ոմանք աղանդաւորաց անունը բողոքական լինելուն համար չէին ուզեր (բողոք) բառը խօսիլ կամ գրել. նորա տեղ ուրիշ բառ կը փոխանակէին, ոմանք ալ (աւետարանական) բառը հերետիկոսութիւն համարեցան. ո՞չ տգիտական տկարամիտ մոլեռանդութիւն են ասոնք։ Մինչեւ անգամ լսեցի յոմանց, որ գինի կամ օղի չը խմողները բողոքական կանուանէին, ոմանք ալ կը գովէին բողոքականները հայհոյութիւն չընելնուն համար. այս կերպիւ թէ իրենք իրենց ընտիր բարեմասնութիւնները այլոց կը յանձնեն, և թէ օտարաց կարծիք կը տան թէ իրենց եկեղեցին կը թոյլատրէ այդպիսի մոլութեանց, եւ ահա այս է կատարեալ ագիտութիւն. ուրկէ յառաջ եկած է և կուգայ այնքան պառակտումներ։ Բառերու և նիւթերու նայելն էր, որ մինչ ցարդ քրիստոնէական Եկեղեցին այսքան տառապեցուց և պիտի տառապեցնէ դեռ։

Եթէ մեր քննադատին արածը հակառակութիւն չէ և եթէ իրօք դը-

քին հեղինակը աղանդաւոր կը համարի, Ս. խորհրդոյ օրինակ, նշան, և արարողութիւն անուններ տալուն համար, չը գիտեմք ինչ պիտի համարի Հայաստանեայց Եկեղեցւոյ Սըրբազան Հայրապետն սքանչելին Սահակը, որ այսպէս կը խօսի, "Եւ հաստատեալ կայ 'ի նոսա. (յեկեղեցին) տէրունական սեղանն, յորոյ վերայ ՋՀԱՑՆ եւ ԶԳԻՆԻՆ պատարագեմք, ՅՕՐԻՆԱԿ կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի 'ի մեզ, 'ի քաւութի և 'ի թողութիւն մեղաց": Հայոց Հայրապետը յօրինակ լինելն ալ կը խոստովանի, քաւիչ զօրութեանն ալ կը հաւատայ, մեր քննադատը ինչպէս կրնայ դատել հեղինակի միտը և ինչու կը գայթակղի նորա յօրինակ բառէն:

Մեր քննադատը որչափ յառաջ գնայ այնչափ կը մոլորի, և այնչափ կը կուրնայ, որ Եկեղեցւոյ խորհրդոյ առաքելական լինելը կուրանայ. "Կը զարմանամ արդարեւ, կասէ նա, թէ գրքիս հեղինակը ինչու եկեղեցւոյ դաւանութիւնքն այսքան տարբեր կը բացատրէ, ինչու սուրբ խորհուրդքը 'ի նշան բացատրելով առաքելական աւանդութիւնք նկատել տալու այսքան կը ջանի": Կեցցէ Պ. քննադատը որ իւր եկեղեցւոյ խորհուրդներուն առաքելական լինելն ալ չը գիտէր. տեսէք որչափ ողորմալի է կամակորութիւնը...: Բայց եթէ ըսէ որ ինքն այդ խօսքով դրոշմն ակնարկել ուզած է, լաւ, մեք եւս կը հաստատեմք, որ ինքն ալ քիչ մը վերը թէեւ առանց նշան բառն արտասանելու նշան լինելը կը դաւանի, ասելով, "Բայց այն ատեն այժմու պէս դրոշմով կնքելն չը կար, այլ հաւատացեալք Առաքելոյ ձեռնադրութեամբ ու աղօթիւքը կ'ընդունէին զՀոգին Սուրբ: Սուրբ Եկեղեցին եւս յԱռաքելոց անտի այնպէս դաւանելով կը հաւատայ և օծութեամբ ու աղօթքով կը կատարէ": Այս խօսքերը քննադատին են. ընթերցող լաւ խորհէ...:

— Եկեղեցին ինչ բանի կ'հաւատայ.

— Ս. Հոգւոյն ընդունելութեանը.

— Ի՞նչ բանով.

— Դրոշմով.

— Ուրեմն դրոշմը Սուրբ Հոգին ընդունելու նշանը կը լինի, որով երախայն կը զօրանայ և կը զինուորի Քըրիստոսի: Ահա առանց բառի եւս նոյն խօսքը կ'ըսուի, ուրեմն յանցանքը բառին է, ոչ, այլ կրից. այլ կամապաշտութեան:

Քննադատին վերոյգրեալ խօսքէն սա եւս կը հասկանամք որ Սուրբ Եկեղեցին այսօր բան մի այնպիսի կերպիւ կը կատարէ, որ Առաքելոց ժամանակ ուրիշ կերպիւ կը կատարուէր, ինչու ուրեմն գրքին Հեղինակը բողոքականաց ծառայութիւն ըրած պիտի լինի: (Հայաստանեայց սուրբ Եկեղեցին առաջին շրջանին մէջ առաքելական աւանդութեամբ կը վարուէր) ըսելուն համար: Կը տեսնէ՞ք որ մեր քննադատը իւր խօսքովը կը դատուի, Հ. Մ. Վ. Մուրատեանցի չափը սա կը վճռէ, ինչու ուրեմն Նա բողոքական կը լինի և Սա ոչ... Այս ոչ բարեխղճութիւն է, ոչ քրիստոնէութիւն է և ոչ ալ ճշմարտութեան հոգիէն յառաջ եկած է:

Արժանապատիւ Հայր Մելքիսեդ Վ. Մուրատեանցի Եկեղեցական պատմութիւնը երբէք ճշմարիտ ու բարեպաշտ քրիստոնէի գայթակղութիւն չը լինիր, այլ "Անուսումներն ու յողդողդները կը կամակորեն իրենց անձին կորստեան համար": Մեր քըննադատը փոխանակ չը գիտցածը քըն-

նելու, երանի՜ թէ ինքզինք քննէր եւ շուտով ապաշխարութեան դառնար, որպէս զի քաւութիւնը նորանոր յանցանօք և եւս չը դժուարանայ։

Դառնամք մեր խօսքին. Գ. քննադատը սարկաւագութենէ լուծուած լինելուն համար մոռցեր է որ խորհրդատետրին մէջ և ս. քանի մի տեղ յիշատակ, առաջադրութիւն, Հաց, գինի եւ բաժակ բառերն յիշուած են. արդեօք ասոնցմէ եւս գայթակղե՞ր է, եթէ չէ գայթակղեր թող անկէց ալ չը գայթակղի։

Գրքին Հեղինակը "Եղբարց հետ հաշտուիլ և ապա գոհութեան հացը բեկանել", առելուն համար դատուած է մեր քննադատէն, իբր թէ բողոքական այժմու դրութիւնը կակնարկէ. – ինչո՞ւ։ – վասն զի սոքա, (բողոքականք) նախ կը գոհանան եւ ապա կը ճաշակեն", եղեր։ Մեք եւս եղբայրական սիրով կը յորդորեմք զինքը որ Սուրբ Աւետարանի մէջ Տեառն մերոյ նոյն կենարար խորհրդոյ աւանդած տեղը քանի մի անգամ կարդայ. ուր պիտի տեսնէ, որ Յիսուս եւս հացը կառնու, նախ կը գոհանայ կը բեկանէ, և ապա աշակերտաց կը տայ ուտելու. նոյնպէս եւ բաժակը առնելով նախ կը գոհանայ; ապա կը խմէ և աշակերտաց կը տայ խմելու։

Բայց մեր քննադատը ինչ պիտի տայ արդեօք, երբ գիտնայ թէ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին եւս 'ի Քրիստոսէ ուսեալ կենարար խորհուրդը ճաշակելէ յառաջ կը գոհանայ և ապա կը ճաշակէ. և այն միջոցին անգամ անխտրաբար հաց և բաժակ կանուանէ և բողոքական եղած չը լինիր։ Բայց ես տարակուսած եմ չը գիտեմ թէ որո՞ւ դէմ է իմ խօսքս, կատարեալ Քրիստոնէի՞, թէ Արախայի, Հայո՞ւ, թէ Օտարազգւոյ. քանզի ոչ քրիստոնէութիւն գիտէ և ոչ Հայ – Եկեղեցին կը ճանաչէ, սանկ մարդուն ինչ խօսելու և ինչ հասկանալու է. ասանկներուն համար է անշուշտ Առաքելոյն սա խօսքերը. "Մարդք ապականեալք մտօք. յամենայն ժամ ուսանին և երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին. որք ոչ երբէք եկեսցեն 'ի լաւ անդր, մոլորեալք և մոլորեցուցանիցեն, այլ դու խորշեսջիր 'ի նոցանէ"։

Քրիստոնէական եկեղեցւոյ նախնի Ս. Հարք անխտիր գործածեր են իբր նուիրական բառեր նշան, յիշատակ, հաց, գինի, օրինակ, ջուր, իւղ, մեռոն, բառերը, և կը խոստովանին որ Եկեղեցւոյ խորհուրդք ըստ արտաքին կատարման իրենց նշանակած ներքին շնորհաց արտաքին նշաններն են. համայն և այնպէս խորհրդոց փրկագործութիւն մատակարարելն ալ կը խոստովանին եւ ամենայն ջերմեռանդութեամբ կը հաւատան. զոր օրինակ "Ընդ տեսակաւ հացի տուեալ լինի քեզ մարմին եւ ընդ տեսակաւ գինւոյ առեալ լինի արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի"։ "Արդ՝ սովորութիւն ունիմք զայն հաց միշտ 'ի փառս և 'ի յիշատակ Քրիստոսի օրհնել . . . ։ Քանզի զեղման 'ի վերայ մեր փրկչին շնորհաց՝ առեալ յիշատակք, գոհութեան տուրք, և մեռոն որբաբար, տօնք աւերունակաւ և այլն . . . ։ Ապա եթէ յայտնէ ('ի հաւատոյ և 'ի սիրոյ) կատարողքն փոխելն, զինչ և գործեն՝ 'ի նմին գանձապէն. զի նա ոչ թէ 'ի տարրն հայի կամ 'ի նիւթըն՝ անխուլ ընութիւն, այլ 'ի հոգին և 'ի սէրն՝ որով տարրն ընծայի։ Զի 'ի Քրիստոս Յիսուս, ասէ առաքեալն Պաւղոս, ոչ այլ ինչ՝ բայց միայն հաւատք սիրով յաջողեալք . . . ։ Գինին՝ նոր ուխտին արեան յիշատակ։

Որով որպէս գծագրեալ պատկերն ոչ է կենդանի և ոչ կենդանացուցանել ունի զօրութիւն, այսպէս և սա թէպէտ օրինակ էր, ոչ ինքն կենդանի և ոչ զայլս որքէր: (Լամբր):

Նշանակէ այս ամէն խօսքերէն յայտնի է որ Լոկ բառերու և Նիւթերու չը նայիր Ճշմարիտ հաւատացեալը, այլ հաւատով և սիրով Նորա Ներքին Ճշմարտութեան և հոգւոյն:

Ճշմարիտ հաւատացեալն ինչու այսի գայթակղի այն բառերէն՝ զորս Նախնիք հաւատով արտասանեցին, բարոզեցին, մեզ աւանդեցին և Նոյն հաւատոյն հաւատքով մեռան: Մինթէ Ճշմարիտ քրիստոնեայն չը՞ գիտէր, որ 'ի փառաւորութեան և 'ի Թողութեան դաւանածը մի գերագոյն բան է, մի անհաս խորհուրդ է և որբագործութի՞ կամօք և բանիւն Յիսուսի. որու Նեթէ բազբանկանք չեն հաւատար՝ կը Նշանակէ թէ Յիսուսի խօսքին և կամքին ոչ արժէք և ոչ հաւատք կընծայեն, թէ աւետարանը չեն հասկնար, թէ ուրիշ Նըկատում մի ունին, թէ . . . ինչ և իցէ, մեզ ինչ փոյթ, անոնց համար մեր աւանդը ընենղէ՞նք. մեր հաւատքը փոխենք, պատմութիւնը խարդախե՞նք, քաւ լիցի, Նոքա ինչ կուզեն թող ասեն, մենք մերը պինդ թող բռնենք, Հերիք է այդ չիմարութիւնը, հերիք է որ մինչեւ ցարդ ատով ինչեր կորուսինք:

Մինթէ մեք չե՞մք կարդար Նաքելյն առ Կորնթացիս գրածը, ուր Հաց և օրհնութիւն բաժակի կանուանէ, բայց և սքանչելի կերպիւ Նորա փրկագործութիւնը կուսուցանէ: Որդքանի որ Նամբեալը օրհնութեան բաժակ, բեկումն հացի և այլն կասէ, ինչու՞ մեր քննադատը Մուրատեանցի բառերէն կը խրտչի:

Յիսուսի ես կը յաւիտ և կը զորմանամ միանգամայն տեսնելով մարդ մի, որ կրկին յորձանքին առջեւ ինկած, այսպէս քարէ քար կը զարնուի:

Եկեղեցւոյ ծառայել չուզող և չատախօսութիւնը, բուՆն ու կիրքը պաշտել ուզող մեր քննադատը այժմ եկեր բարեպաշտ կը ձեւանայ և իւր կիրքն յագեցնելու համար յանցանք չը գտնելով խեղճ փեժինգութեամբ բորբոքած եկեր (կրօնքին ծայնոյն՞ց կը պոռայ), բայց իւր խօսքերը կը յայտնեն, որ ինքը ոչ բարեպաշտ է և ոչ ալ կըրօնական անխածութիւն և երկիւղածութիւն ունի. վասն զի եթէ ունենար, այսպէս խաբէական ձեւերով և անհմտութեամբ խորհրդոց քննութեն չը պիտի մանէր: Խորհուրդք սէր և հաւատք կը պահանջեն և ոչ թէ խօսք. ինչպէս կը խօսի Լամբրոնացին. "Իսկ 'ի սա ('ի խորհուրդ սուրբ պատարագին) հասանէ միայն հաւատ և սփոփումն և ոչ թէ յօդուած բանի և օրինակացն: Եթէ մեր քննադատը Ճշմարտութիւնը սիրէր, եթէ այլ ինչ ոգւոյ թելադրութեան չանսար, գէթ պիտի յիշէր որ Հ. Մուրատեանցի շարագրած Եկեղեցական պատմութիւնը պատմութիւն էր և ոչ կրօնագիտութիւն և այլն:

Պէտք է յիշէր որ Եկեղեցական պատմութիւնը դասագիրք լինելով զայն կարդացող աշակերտը արդէն Հին ու Նոր Կտակարանի պատմութիւն և կրօնագիտութիւն կարդացած պիտի լինի. ուստի երբեւյօջորդ դասագիրք, հարկ չը կար կըրօնական Նիւթոց սահմանին և Նշանակութեանց վերայ երկար խօսիլ, զորս արդէն ուրիշ դասագիրքերով ուսուցած էր, այլ իբր պատմութիւն ժամանակին եղածներն յիշել հարկ էր և այնպէս արած է:

Մեր քննադատը ամբողջութիւն բա-

ուէն ալ կը դայթակղի եղեր, ինչ ցուցուցէ համամիտը, որ ամէն հոգիէ կը շարժի: Մեք գիտեմք որ օրէնքն անգամ երկար ատենութեամբ հաստատութիւն կը գտնէ: Նոյնէ ատանց Հեղինակէ անաշարժութեամբ գոյացած սովորութիւնը, այլ է գերագոյն Հեղինակէ մի նկիքն տուած, ընդունուած և յաճախ կրկնութեամբ երկար դարերով սովորութիւն եղած քան մի, Եկեղեցական սահմանութեան Հեղինակը իւր գրքով կընդունի որ Եկեղեցւոյ խորհուրդներն Հայաստանեայց եկեղեցին 'ի Քրիստոսէ և Առաքելոց անմի ուսած, և նոյնը սովորութեամբ, յարատեւ կատարելով մինչեւ ցարդ հասուցած է: Ուրեմն Գ. քննադատը թող քիչ մի խորհի գիտնալու համար թէ ինքն ինչ մոլորութեանց մէջ ինկած է. և նախ քան զայս՝ ինքզինք թող դատէ կամ ճշմարիտ բարեկամի մը դատաստանին ենթարկէ իւր անձը:

Ամուսնութեան համար քննադատին գիտցածէն աւելին ըսուած է նոյն գրքին մէջ, նմանապէս ձեռնադրութեան և վերջին օծման համար անկէ աւելին ասելոյ կարեւորութիւն չը կար: Գ. քննադատը վերջին օծման համար խօսած ատենն ալ կը խոստովանի որ ազգաց սովորութիւնք այժմ քիչ շատ կը տարբերին առաքելոց սովորութենէն, որով իւր խօսքին համեմատ ինքզինք կը դատապարտէ իբր բողոքական. քանզի ասել է, որ կար ժամանակ մի որ այժմեանէն տարբեր, այսինքն Առաքելական սովորութեամբ կը վարուէր Եկեղեցին:

Այս համառօտ բացատրութիւններէն և օրինակներէն կ'երեւի յայտնապէս որ Հայաստանեայց Եկեղեցւոյն հակառակ չէ Մելքիսեդեկ Վ. Մուրատեանցի Եկեղեցական սահմանութիւնը, զոր ճշմարիտ Հայն իւր հաւատոյ հաստատութեամբն արդէն ձեռագիրը կարդայեր ընդունէր և (կարծեմ առանց Հեղինակին իսկ գիտութեան) դպրոցին մէջ դասախօսած էր, իսկ չըկամ Հայը զայն խծբծելու ելեր է. և ինչ հոգ, միթէ այն կենաց Գիրքը, այն սրբութեան և աստուածանմանութեան առաջնորդող Ս. Աւետարանը չարաչար չը մեկնեցի՞ն մարդիկ. և միթէ նորա պայծառութիւնը աղարտեցա՞ւ, քա՜վ լիցի. այլ առաւել պայծառ փայլեցաւ և տարածեցաւ. քանզի ճշմարտութիւնը չը ծածկուիր:

Գ. քննադատը ինքն ալ գիտէ որ Մելքիսեդեկ Վ. Մուրատեանցը ապաշխարութեան խորհրդոյ ինչ լինելը և որչափ կարեւոր լինելը կը հականայ, եւ կուսուցանէ. բայց ինքն փոխանակ նորա գրքին մէջ որոնելու, թող իւր սրտին մէջ որոնէ եւ եթէ ինքն ճշմարտութեամբ կզգայ ապաշխարութեան կարեւորութիւնը, պէտք էր մինչեւ ցարդ շուտով ապաշխարէր, քանզի ինքն շատ կարօտ է այդ կենսաւէտ դեղին.

Մենք այսչափը բաւ համարելով կը խրատեմք զինքը եղբայրական սիրով որ յանցանք յանցանաց վերայ չը բարդէ. քանզի ատով մարդ չարդարանար, այլ յանցանքն զգալով, ճանչնալով, զղջալով և ապաշխարելով:

Կը վերջացնեմք խօսքերնիս Աստուծոյ շնորհքը մաղթելով իրեն համար:

ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏԸ

Երկնաւոր վարդապետն Յիսուս միշտ շրջապատուած էր ժողովրդոց մեծ բազմութենէն և իւր աշակերտաց փոքրիկ հօտէն, շատ մեծամեծ հրաշքներով, քաղցրութեամբ եւ բարերարութեամբ բոլոր շրջակայ գաւառներուն սիրելի ու ցանկալի եղած էր։ Ամեն ոք կը բաղձար զինքը տեսնել, ամեն տուն կուզէր հիւրընկալել եւ ծառայութիւն մը մատուցանել, ամեն գաւառ կը փափագէր զայն իրեն իշխան ունենալ։ Քանզի նորա ձեռքերէն գթութիւն ու մարդասիրութիւն կը սփռէր. նորա ամեն մէկ խօսքերը անանց մխիթարութիւն և կենդանութիւն կը շնորհէր։ Սակայն նա անկարօտ էր, աւելորդ պիտոյից հոգ չունէր; նորա թագաւորութիւնը այս աշխարհէն չէր. նա նիւթական փառքերէ և սին պարծանքներէ կը խուսէր։ Նորա փառքն էր քարոզել և բարերարել. նա չէր կամէր առանց բարիք ընելու օր անցնել, շարունակ խնամք և բարութիւն կը մատակարարէր ամենուն։

Օր մի երբ այսպէս մեծամեծ երախտիքներով փառաւորուած էր ժողովուրդէն՝ իւր աշակերտներով առանձնակ տեղ մի իջաւ քիչ մի հանգիստ առնելու և ժողովրդեան օգտի համար նոր քարոզներ պատրաստելու։ Այն տեղէն սրտի ցաւօք թշուառ ժողովրդեան վերայ նայեցաւ, տեսաւ զանոնք որ դպրաց, փարիսեցւոց, օրէնսգիտաց և քահանայից անհոգութեամբը, ագահութեամբը, փառասիրութեամբը, մոլորութեամբ ու երեսպաշտ կեղծաւորութեամբը զուրկ մնացեր են ամեն բանէ, զուրկ ճշմարիտ առաջնորդէ, զուրկ անձնազոհ հովիւներէ, զուրկ Աստուծոյ խօսքը լսելու միջոցներէ, և վերջապէս տեսաւ որ զուրկ կը գտնուին բոլոր հոգեւոր մխիթարութենէ, եւ տեսաւ որ ցրուած են անհովիւ ոչխարներու նման, վշտացաւ, և արգահատական կերպիւ անպատում սիրով լցուած՝ խօսեցաւ աշակերտաց հետ ասելով «Հունձք բազում են և մշակք սակաւ, արդ աղաչեցէք զտէր հնձոցն զի հանցէ մշակս 'ի հունձս իւր»։

Մարդասիրութեամբ և հայրական գթով լեցուած էր Յիսուսի սիրտը եւ կուզէր ժողովրդեան հոգեւոր պիտոյից նպաստել. ուստի նոցա թշուառութեան վերայ զգացած վիշտը եւ նոցա պիտոյքը աշակերտաց յայտնելով ուզեց որ նոքա եւս իրեն նմանին. այս յայտարարութեամբ կամեցաւ ապացուցել նոցա մէջ իւրեանց առաքելոյ պաշտօնի սրբութիւնքը. ուստի թէ նոքա մեծ հոգ պէտք է ունենան ժողովրդեան վերայ և նոցա հոգեւոր պիտոյից համար փոյթ եւ ջանք չը խնայեն. ուստի որ նոքա հանգստութիւն, փառք և պարծանք պէտք է համարին միայն իրենց ուսուցած, կրթած, բարքերնին ուղղած և մեղքերէ ազատ ճամբ վարժեցուցած ժողովուրդը, և ոչ թէ ուր երկրաւոր ուրիշ որ և իցէ բան։ Այս կերպով յորդորեց զանոնք իրեն նմանիլ եւ պատրաստեց զանոնք իւր ճշմարիտ աշակերտներ լինելու, «Հերիք է, ըսաւ, որ աշակերտը իւր վարժապետին պէս լինի»։ դուք եւս պէտք է այժմէն ինծ նմանիք սիրով, խոնարհով և գործով։

Յիսուս այս, զանոնք այսպէս հրահանգելէ վերջը ուղարկեց ըսաւ եւ նոցա մէջէն տասներկու հոգի ընտրեց, ինչպէս ուրիշ անգամ ալ եօթանասուն աշակերտներ, եւ զանոնք զոյգ զոյգ ղրկեց ժողովրդեան քարոզելու, ուսուցանելու, նոցա հոգեւոր ու-

մարմնաւոր ախտերէն զիրենք բժշկելու, մեղաց ծառայութենէն ազատելու և Աստուծոյ արքայութեան ժառանգորդն նոցա ուսուցանելու եւ առաջնորդելու համար։

Մեծ ու Վսեմ էր այս պաշտօնը, հարկաւ ուրեմն զինուորէն ալ մեծամեծ հանգամանքներ կը պահանջուէր։ Նա՝ առաքինութիւններ, զինուորին խօսքերն ու նշանը պիտի ունենար։ Այս ամենը տեսաւ Յիսուս ընդունակ եղողներուն. Այն պաշտօնը յանձնած ատեն իբրեւ անհրաժեշտ հարկ, պաշտօնին յարակից և իբր արտաքին հանգամանք քանի մի խրատներ և նշաններ տուաւ, որոց բովանդակութիւնն է. — Սեփական ինչքը, աւելորդ պէտքը, մարմնոյ հոգերը, փափկութիւնը և այլն ատել, իրենց յանձնուած պաշտօնէն կատարելէ զիրենք արգելող ամեն բան մինչեւ իսկ իրենց կեանքը արհամարհել, անդադար շրջիլ և Աստուծոյ խօսքը քարոզելու ընբաղին։ Հրամայեց որ կերակրոյ համար իրենց ախորժակը չը տածեն, այլ ինչ որ իրենց բերուի, զայն ուտեն. և եթէ ատենի չափաւորութեամբ եւ ժուժկալութեամբ ապրելով եւ այս պատուէրները պահելով ընթանան, իրենց բան չը պիտի պակսի, կարեւոր պիտոյքնին պիտի ընդունին. քանզի "Մշակը իւր վարձքին արժանի է"։

Արդ՝ եթէ նոքա իրենց պաշտօնը այսպէս ամենայն ճշդութեամբ, ուղղութեամբ, սիրով և կամաւ կատարէին, այն ատեն Յիսուսի Քրիստոսի դեսպանն ու փոխանորդն էին, նորա առաքեալներն ու ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ էին և այնպիսի աշակերտաց, ատենի պաշտօններ կատարելու համար զինուած դեսպանաց էր որ առաց Յիսուս, "Որ զձեզ անարգէ, զիս անարգէ, եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի"։

Բայց եթէ Քրիստոսի աշակերտ անուանեալ մէկը չունենալով և չըտանալով պաշտօնի պահանջած հանգամանքները, մոռնալով իւր պարտաւորութիւնքը. — Փոխանակ Աստուծոյ խօսքը քարոզելու՝ ինքզինք կամ իւր կամեցած մէկ մարդը քարոզէր, իւր անձին փառքն որոնէր, այլ և այլ պաշտօններ և իշխանութիւններ ստանալու ձգտէր և ատենի սին փառաց տենջանքով ժողովուրդ յուզէր, զինքն ուզած տեղը չերթար և չուզած տեղը կոչ ու կաւակից ձգելով և ուրիշ անարժան հնարիւք և միջոցաւ բանանալ կենալ ուզէր, ուխտ ու խոստումն դրժէր, երդմնազանց լինէր, աղքատը կեղեքէր և մեծատունը շողոքորթէր, ինչք դիզելու ջանայր, հպարտութեան, ձոխութեան և բարձրադահ աթոռոյ անձկանէր. փայլուն ու գունագեղ հանդերձներով լայնշկանաց նման եթէ յոտից մինչեւ ցգլուխ պճնուէր, մեծածախ հանդերձանօք կերակրոց ցանկար և պահանջէր. առաւօտէն ցերեկից սեղանը փափուկ գորգերու մէջ անդորրնէր, կամ զբօսավայրերու և տուներու մէջ դատարկաբանութեամբ ծաղրածութիւն և խեղկատակութիւն ըներ և կամ ուրիշ խաղերով զբաղէր, եթէ կրնէր, ծխելով ժամանակ անցընելու ջանար, գինւով թմրէր եւ քնով զանդուաջէր, հեշտութեանց և շուայտութեանց մէջ թաւալէր, — նա անշուշտ այն ատեն ՅԻՍՈՒՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏ չէր լինէր —, ինչպէս որ Յիսուս ալ այնպիսին չընտրեց։

Նա եկեղեցւոյ անդամ կամ պաշտօնեայ չէր և չէ, կուզէ ժողովրդական լինի կուզէ եկեղեցական, հոգ չէ, թող այնպիսին դպիր կամ սարկաւագ, կամ քահանայ լինի, Վարդապետ, Եպիսկոպոս

կամ Կաթողիկոս իսկ լինի. քանզի ամէնքին ալ իրենց պարտքը, պաշտօնը, յատկութիւնն ու նշանն ունին. բնութեան մէջ իր մի չը կայ որ ուրիշ իրէ մի տարբերելու համար իւր մասնաւոր յատկութիւնը չունենայ. աշակերտն ալ իւր աշակերտութեան յատկութիւնը ունի:

Յիսուս Քրիստոս ոչ նորա աւետարանով և ոչ ուրիշ մի տեղ երբէք բացատրած և ուսուցած չէ թէ այնպիսիները իրեն աշակերտ կըսուին համարուիլ. այլ ընդ հակառակն ուսուցած է թէ «Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա», դառնապէս դայ. անձնասէր հովիւ, կոյր՝ առաջնորդ կուրաց, անուանած է զայնպիսիս: Եւ ոչ ալ եկեղեցին ընդունած է այսպիսի սկզբունք մի, որ իւր պաշտօնէից զեղծումներն ու անարժանութիւնները անտեսելով և գայթակղելով հանդերձ՝ առնուած լինի զանոնք իբրև Քրիստոսի աշակերտ ընդունելու. «Ամէն հոգւոյ մի՛ հաւատայք, այլ հոգիները փորձեցէք և տեսէք թէ նոքա Աստուծմէ՞ են», ըսաւ Առաքեալը:

Այս պատճառաւ եթէ մէկը Քրիստոսի ճշմարիտ աշակերտին նշանն ու գործը չունենայ և եկեղեցւոյ անդամներէն մին զայն մերժէ իրաւամբ՝ իբր Քրիստոսի անարժան աշակերտ, այն ատեն ոչ Քրիստոս մերժուած և ոչ ընդհանուր եկեղեցին անարգուած կը լինի. քանզի եկեղեցին անարատ է, իսկ նա արատ ունենալուն և սրբուիլ չուզելուն համար մերժուած ու անարգուած է: Եկեղեցին անարատ է, ուստի ինչ որ արատաւոր է, եկեղեցին չէ, արատաւոր պաշտօնեայն կամ Քրիստոսի աշակերտութեան պատրուակաւ Քրիստոսի հրամանաց և օրինաց հակառակ շարժող աշակերտ անուանեալը երբ իւր արատներուն համար կը դատուի, պէտք է գիտնայ, դառնայ և սրբուի, ասել թէ ոչ զինքն անարգողը ոչ թէ միայն զՔրիստոս և զեկեղեցին անարգած չը լինիր, այլ ընդհակառակն նաև պատուած, պաշտած և նորա սրբութեան ու փառաց նախանձախնդիր կը հանդիսանայ:

Նոյնպէս ալ երբ Եկեղեցւոյ անդամներէն մին, ժողովրդական մի կ'արատաւորի և կամակորութեամբ իւր չարեաց վերայ կը յամառէ, ստութեամբ արդարանալու համար ամէն վատ ու անարժան միջոց կը գործածէ. երբ Քրիստոսի ճշմարիտ աշակերտին խրատները, կշտամբանքն ու հոգևոր պատիժները կանարգէ և չարաշարութեամբ իւր հոգևոր առաջնորդը, ուսուցիչը և հայրը կ'անպատուէ, կը թշնամանէ և կը զրպարտէ, այն ատեն նոյն ժողովրդականը, նոյն անձը, ով որ ալ լինի Յիսուսի ճշմարիտ աշակերտը անարգած անպատուած և չընդունած կը լինի, և զայն անարգելով զՅիսուս անարգած կը լինի:

Իսկ այսպիսի պարագայից մէջ նոյն ճշմարիտ աշակերտին պարտքն է առանց հակառակութեան նոցա մէջէն անցնիլ և գնալ, ինչպէս Յիսուս Նազարէթի անհաւատ ժողովրդոց ըրաւ՝ երբ զինքը լեռնէն վար գահավէժ անելու կը տանէին. ուրիշ անգամ մի եւս երբ զինքը պիտի քարկոծէին, խոյս տուաւ:

Մանաւանդ ո՛չ այսքան Յիսուս իւր աշակերտները քարոզելու ղրկած ատեն ասած էր նոցա թէ, «Զձեզ չընդունած քաղաքէն փախէք և ուրիշ քաղաք գնացէք». ըսել է որ պէտք չէ ներհակել, ընդդիմանալ և զօրութիւն կազմել: Նոյնպէս և Յիսուսի բերնով խօսող Պօղոս Ս. Առաքեալն եւս երբ Եպիսկոպոսի հանգամանքները կըսարադրէր՝ ըսաւ, թէ «Եպիսկոպոսը կը-

ռուսասէր կամ հակառակող մը պիտի լինի »։

Ուրեմն այն աշակերտն որ այս հանգամանքները չունի, ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏ չէ. և իրեն անարգուելովը եկեղեցին ալ անարգուած չը լինիր. ասկէց այլ կերպ հասկացողն ու քարոզողը Աստուծոյ խօսքը կը թիւրէ և կը կամակորէ։

ՄԵՐ ՎԻՃԱԿՆ Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԼԻՆԻ

Ով որ բան մը կը սիրէ, անոր հոգը ևս կը տանի. կը բերկրի զայն ապահովութեան մէջ տեսած ատեն, և կը տխրի ու անհանգիստ կը լինի երբ նորա վտանգը կը նշմարէ։ Այն զգացումը բնական է ոչ միայն մարդոց, այլ և անբանից անգամ, զորս կը տեսնեմք թէ ինչպէս կը գալարնան և կը կատաղին նոքա մինչ իրենց սիրելի ձագը վտանգի ենթակայ կը տեսնեն, կամ իրենց որսի յափշտակուիլը կըզգան։ Մարդս որ միշտ բարձր է անասուններէն իւր իմացականութեամբ, բարձր է անոնցմէն նոյնպէս իւր զգացմանց կատարելութեամբ։ Արդ՝ մարդ մը որ իւր սիրած որ և իցէ մի աննշան առարկայի համար յուզումներ և գրգռութիւններ կը կրէ, ապա քանի՛ առաւել չի յուզուիր նա և չ՚տագնապիր, երբ իւր ուշադրութեան առարկայ իւր սիրելի Ազգն եղած լինի. մեր խօսքը անտարբերներու համար չէ, որոնք աշխարհ ալ քանդուի հոգ չեն ըներ. և ոչ անձնասէրներու համար, որոց բոլոր զգացումներն միմիայն մէկ կէտի վրայ կը կայանայ, այն է իրենց շահը։ Այլ մեք նոցա համար կը խօսինք, որոնք մարդկօրէն կ՚ապրին, ընկերականութեան օգուտները կը ճանաչեն և ազգութեան ու ազգայնութեան նշանակութիւնը գիտեն։

Բաւական ժամանակէ 'ի վեր մեր թիւրքիաբնակ ազգայնոց ունեցած տարտամ, շփոթ և անանդորր վիճակը արդէն մտածողութիւն կը պատճառէր հայասէր սրտերու. իսկ այժմ անոնց վրայ աւելնալով արդէն շփոթութիւնքն ու տակն 'ի վրայութիւնք. հրապարակական թերթերու լուտանքներն ու գրգռութիւնքը, Ազգային վարչութեան անհամաձայնութիւնն ու պառակտումները եւ վերջապէս Ազգային կառավարութեան անկերպարան վիճակը, ազգին կացութիւնը աւելի ողբալի և վտանգաւոր կը գործեն. Ազգասէր սրտերն տեսնելով այս ամէն անպատեհութիւնները, զգալով նոցա ողբալի հետեւութիւնը և նախատեսելով ապագայն կործանարար ակամբ, կը յուզուին կը մորմոքին և ահաբեկ ու շուարեալ կոկորդին աղաղակել, թէ ինչ պիտի ըլլայ մեր վերջը և ուր պիտի հասնիմք այս ընթացքով։

Եւ արդարեւ անհնար է ճշմարիտ Հայու մը, գիտնալ Հայու նախկին փառահեղ վիճակը. տեսնել նորա արդի խղճութիւնը, բաղդատել ներկայն անցելոյն հետ, նշմարել ապագայն միգապատ և մթակոլից ու չը մորմոքել և չարտասուել և չը խանդաղատիլ։ Քանզի կար ժամանակ ուր մենք եւս արդի մեծամեծ ազգաց նման փառօք եւ պատուօք ճոխացեալ ժամանակի քաղաքականութեան մէջ բարձր դիրք և նշանաւոր տեղ մը ունէինք. կար ժամանակ ուր մեր հզօր թագաւորներն ու փառաւոր իշխաններն զօրքս եւ զօրինս կը կառավարէին իմաստութբ. կար ժամանակ ուր մենք եւս շքեղ և բարելի Հայրենիք մը ունէինք. այն ալերծ դրախտավայրը և այն ճոխ ու

փարթամ երկիրն. այն Հայաստանն որ Յակոբայ խոստացուած աւետեաց երկրին պէս կաթ և մեղր կը բղխէր. որ հսկայ դիւցազուններ կը ծնանէր, որ իւր վեհութեամբ Յոյները նախանձաբեկ կ'ընէր, եւ որ իւր հարստութեամբ Պարսից, Թաթարաց, Արաբաց և Սկիւթացւոց միանգամայն ագահութիւնը կը գրգռէր: Բայց աւաղ մեզ փառաւորաց որդւոյս ինչ մնացած է այսօր նոյն Հայրենի պերճութիւններէն, ցաւ 'ի սիրտ կը տեսնեմք որ և ոչ ինչ. այն բազմաթիւ միլիոնք և հզօր Հայ ազգը այսօր յալորս աշխարհաց ցրուեալ, զուրկ 'ի Հայրենեաց օտար կլիմաներու տակ կը մնանին. օտար աստղերու տակ կ'օթագային, օտար օդ կը ծծեն և օտարներու կը ծառայեն, հարստահար և թշուառ, այն ճոխ շքեղ և փառաւոր Հայը կողոպտեալ ամեն բանէ իւր ուրուական կը ներկայանայ ճնշեալ. արհամարհեալ և հալածեալ:

Իսկ մենք տարաբաղդ որդիքս Հայոց, որ այնքան բարձրութենէ այսչափ նուաստութեան եմք հասած „որ 'ի ծայրէ պերճութեան 'ի խորս թշուառութեան եմք գլորած, ինչ կը գործեմք այսօր և ինչ կը մտածեմք. մենք որ Հայկայ որդի անուանիլը մեզ փառք կը սեպենք, ինչ Հայու գործ գործած եմք. մեր առաքինի նախահարց հոգւոյ բարեմասնութիւններէն ինչ մնացած է մեզ, կարծեմ դարձեալ ոչ ինչ. և մեր ներկայ կացութիւնը 'ի նկատի առնլով, կը տարակուսիմ թէ մի գուցէ մենք փոխանակ մեր հարց սիրալի առաքինութեանց և արարմանց, միմիայն նոցա աւերիչ մոլութիւնները ժառանգած ըլլամք. կը տարակուսիմ այս թէ մի գուցէ Տրդատայ, Սմբատայ, Վարդանայ, Վահանայ մաքուր և վեհ հոգւոյ տեղ, Մեհրուժանայ, Վասակայ և Գըլեհանի սեւ ու վատ հոգիները ժառանգած ըլլամք, կը տարակուսիմ այս և այս տարակուսանացս պատճառներն են Հայ ազգի ներկայ չփոթ, անյառաջդէմ և երկպառակ վիճակը. և արդի Հայուն անխնամ, ստորանալ և թիւր ընթացքը որ բնաւ չը յարմարիր մեր առաքինի նախնեաց անձնուէր Հայասիրութեանը:

Ամենուն յայտնի է Վարդանանց սքանչելի նահատակութիւնը. որ ոչ միայն Հայոց՝ այլ նոյն իսկ օտար ազգաց յարգանքն ու հիացումը կը գըրաւէ իւր վսեմութեամբ. որոյ համար ասած է օտարազգի բանաստեղծ մի թէ "Երբ (*) Եղիշէ կը կարդամ կը Հայանամ„. և արդարեւ ո՛ր զգայուն սիրտ չը սքանչանար ու խանդաղատիր այն վսեմ տեսարանին առջեւ, ուր Աստուածասիրութիւնը՝ Ազգասիրութեան հետ միացած եւ կրօնասիրութիւնը Հայրենասիրութեան հետ 'ի մի ձուլուած՝ հոգիներն երկնային սիրով բորբոքած՝ և սրտերն քրիստոնէական արիութեամբ ոգեւորած, տկարութիւնը զօրութեան դէմ անվեհեր կը խիզախէ, մահը կեանքէն վեր կը դասուի եւ Եկեղեցւոյ համար արիւն թափել և նահատակուիլը փառք կը համարուի.

Ո՞ւր էին այն տեսարանը ներկայացնող անձինք. — մեր նախահարքն. ո՞վ ենք մենք, — նոցա որդիքը. — ինչո՞վ կը պաշտպանէին նքա ազգը, հայրենիքը և Եկեղեցին. — ազգասիրութեամբ հայրենասիրութեամբ, կրօնասիրութեամբ, և զոհողութեամբ. — ինչո՞վ կրնանք պաշտպանել մենք եւս մեր ազգը եւ մեր Եկեղեցին. — անշուշտ նոյն հանգամանքներով. — ինչո՞ւ հա-

(*) Եղիշէ Վարդանանց նահատակութեան պատմիչն է որ թարգմանուած է Եւրոպական լեզուներու:

մար մեր ազգը հետզհետէ կորսուելով կը նուաղի, երկիրը կամայանայ և մեր Եկեղեցին օր քան զօր յանշքութեան կը դիմէ: Վասն զի այս յայտնի նշան է թէ, մենք ճշմարիտ ազգասիրութիւն, հայրենասիրութիւն եւ կրօնասիրութիւն չունինք. որովհետեւ եթէ ազգը սիրէինք, անշուշտ զիրար ևս պիտի սիրէինք, (ըստ որում ազգը անհատներէ կը բաղկանայ). եթէ սիրէինք զիրար՝ ատելութիւնը մեր սրտերու մէջ տեղ չը պիտի գտնէր. և եթէ ատելութիւն և կիրք չը լինէին, անշուշտ այններքին հակառակութիւնք, անհամաձայնութիւնք և 'ի վնաս ազգին եղած հակառակ շարժումներն տեղի չը պիտի ունենային: Այս ամեն վնասներն քանի որ կան և կ'երեւին մեր ազգի մէջ, ուրեմն յայտնի է որ մեր սրտերն փոխանակ եղբայրական սիրոյ՝ ատելութեան կրիւք պաշարեալ են: Ուր որ կիրքը կը տիրապետէ՝ հոն խոհեմութիւնը գործ չունի, ուր խոհեմութիւն չը կայ՝ հոն հեռատեսութիւն և շրջահայեցութիւն կը պակսի. ուրկէ հեռատեսութիւն կը պակսի, անդ ամենայն ինչ յախուռն, գրգռեալ, և 'ի վնաս կը գործածուին ու մարդիկ պանծալով 'ի կորուստ կը դիմեն եւ այնու կը կործեն փառաց յաղթանակ կանգնեալ: Ի՞նչ տարբերութիւն ունի այն նկարագրութենէն մեր այժմեան ընթացքը: Բաւական ժամանակէ 'ի վեր լուրջ, անկողմնակալ և հասուն դատողութեամբ գրուածներ բոլորովին անհետ եղած են ազգային օրագրաց մէջէն. այլ նոցա մէջ տեսնուածներն են շարունակ վէճ, անդադար կռիւ և գրգռիչ յարձակումներ, նոյա վերայ աւելցաւ Պատրիարքի հրաժարման խնդիրը. անկից ծագեցաւ Ընդհանուր ժողովը բաժանումը. դռնբաց և դռնփակ նիստի խնդիրը. Ժողովրդեան վերջին ծայր յուզումն, խորհրդարանի դռներ բռնաբարուիլն, եթէ իրաւ են. գիւանի հրաժարումը և այլն և այլն և այլն:

Ահա կիրքն այսչափ վնասներ կը գործէ. Հայն իր Թագաւորական և իշխանական հարստութիւնն ու զօրութիւնը կորուսելէն 'ի վեր՝ քաղաքականապէս վերջին դարուս մէկ մխիթարութիւն միայն ունէր, այն է Ազգային Սահմանադրական Վարչութիւնը, որով ցարդ կը կառավարուէր Օսմանեան Բարեխնամ Կայսեր հովանաւորութեան տակ և իր ցաւոց ըստ կարելւոյն դարման կը մատուցանէր. այսօր անանցի և վնասակար շփոթութեանց աւթիւ նոյն Ազգային կառավարութիւնն ևս այնպիսի անդամալուծութեան մը ենթարկուած է որ գործելու բոլորովին անկարող կը գտնուի, հետեւապէս ազգային կենական խնդիրներն իրաւ երեսի վերայ ձգուած հարստահար և տառապեալ Հայը իր փրկութենէն յուսահատ չը գիտեր ուր դիմէ և որու ապաւինի: Հայու դարաւոր և արիւնարբու թշնամիքն եւս կարծես զգալով Ազգի երկպառակութիւնն ու ներքին տկարութիւնը, եւ դառնութեան Թոյնը Թափելու պատեհ առիթ համարելով ներկայս ամէն ճիգ կը Թափեն անպաշտպան Հայը կեղեքելու և տառապեցնելու, գաւառացի Հայը այնպիսի կացութեան մը մէջ կը գտնուի, որուն ամէն կողմէն վտանգ կըսպառնայ. մի կողմէն Տէրութեան օրէնքին ապըստամբ և ըմբոստ Տաճիկներ հակառակ կամաց բարեխնամ Կայսեր, հեռաւոր քաղաքներու և գիւղերու մէջ անլուր բարբարոսութք Հայուն վերայ կը բռնանան, նորա իրաւունքները կը յափշտակեն, զայն կը գանակոծեն և կը չարչարեն աներկիւղ և ան-

պատիժ ։ Միւս կողմէն վայրենաբարոյ և անխիղճ բնութիւնն իւր հնացելոյ ոխակալութեամբ խեղճ և անտէրունչ գիւղացի Հայուն վրայ իշխած պաշտօնեաներ զայն կը գիշատէ, խղճուկ Հայն կը կողոպտուի, կը զրկուի, կը հալածուի, և կը խողխողուի և արիւնաթաթաւ 'ի գետին փռուած՝ դժբաղդութիւն կ'աղաղակէ, օգնութիւն կը հայցէ բարբարոսաց դէմ, բայց իւր ձայնը իւր կոկորդին մէջ խղդուելով անլսելի կը մնայ. որով հակառակորդն քաջալերուելով իւր բարբարոսութիւնը աւելի զայրագին կերպի 'ի գործ դնել։ Մի կողմէն վարիկանի ջերմեռանդ աշխատաւորներն ամէն տեղ սըփռելով վշտահար Հայուն ամէն դիւրութիւն կը խոստանան և ստապատիր խոստումներով դուռն գործեն ձգել զայն Փափականութեան վհին մէջ. միւս կողմէն ամերիկացի միսիոնարք մարդասիրութեան և բարեպաշտութեան դիմակաւ, ծածկելով իրենց քաղաքական նպատակը պարզամիտ ժողովրդեան միտքը կը պղտորեն, հաւատքը կը խախտեն, միւս կողման կը վերցնեն և կը ջանան զայն մայրենի եկեղեցիէն հեռացնելով, խորթացնել։

Երուսաղէմայ մէջ Հայոց իրաւունքները կը բռնաբարուին, Ս. Տեղիքը կը յափշտակուին. Յոյնք կը բռնանան և տեղւոյն Կառավարութիւնը փոխանակ իրաւարար լինելու մինչև անգամ գինու զօրութեամբ մեր արդար իրաւունքները Յունաց ազգին սեփական ընել կը տայ չը գիտեմ ինչ իրաւամբ։ Ահա այս ամէնը Ազգային Վարչութիւնը կը տեսնէ կը լսէ բայց դարման մը չըներ. և ինչպէս կրնայ ընել, քանի որ նախ ինքը բժշկութեան և դարմանի կը կարօտի և բուժող չի գտներ. ահա այս ամէնը տեսնելով ճշմարիտ ազգասէր սրտերն կսկծահատ կը մղեն։ Մրմռքին և ողորմ ձայնով կ'աղաղակեն թէ ինչ պիտի ըլլայ մեր վերջը, ո՞ւր պիտի երթանք այս ընթացքով պիտի դատապարտինք, և ո՞վ պիտի ըլլի մեր փրկիչը։

Մ. Գ. Շահնազեան
Նիկեայի ։

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն

(Շարունակութիւն. տես թիւ 9.)

Գ.

Սիրելի ընթերցողք իմ, որ և իցէ կերպ ձեր մարմնին մէջ նոր և անսովոր շարժութիւն մի կը պատահի, այն շարժութիւնը կը խանգարէ ձեր հանգստութիւնը, զոր օրինակ. բարկութեան ժամանակ ձեր սիրտը կը թնթայ և կ'սկսի արագ արագ բաբախել, արեան հեղեղին ու հանդարտ շրջանը կը շփոթի և կ'ըսկսի արագ կատարուիլ. մազը կը յուզի, կը բորբոքի և կը բարձրանայ կամ ետ քաշուելով կը կծկուի և կը զայրանայ. մթագին մառախլապատ գոլորշի մը ձեր ուղեղին կը պատէ, ձեր խորհուրդը կը շփոթէ և ուղիղ դատելու կարողութիւնը ձեզմէ կ'առնու. այսպիսի ներքին բուռն շարժութիւնք բնութեան կարգը կը խանգարեն և կը պատճառեն խելագարութիւն, անդամալուծութիւն, կաթուած և ջղային ընդհանուր տկարութիւն։ Մինչև անգամ մեծ իմաստուն Սենեքայ "Բարկութիւնը յանկարծական մահուան պատճառ է", կ'ըսէ։ Ամէն կիրքեր ալ ահա այսպիսի տխուր ու ցաւալից արդիւնքներ յառաջ կը բերեն, բայց մանաւանդ ցանկութեան կիրքը, որ իւր ապառիկ զօրութեամբը մարդկային կենաց ցեղն ու գովելի յատկութեանց կողոպտիչն է։

Պատմութիւնը քանիներ կը ներկայացնէ մեզ այս անհնուն ապացոյց. ոմանք իրենց բարկութեան կրից ահաւոր շանթերը հուրային թափած են իրենց բարեկամին՝ ազգականին, եղբօրը և մինչև իսկ իրենց ծնողաց վերայ և իրենց կեանք տուողին կեանքը վերջացուցած են յամօթ և 'ի նախատինս իրենց անմարդավայել սրտին. քանիներ բարկութեամբ յանկարծ խուլ եւ համր դարձած են, ոմանք անդամալոյծ եղած և ոմանք իսկ յանկարծակի ինկած ու մեռած են.

Մինթէ չէք գիտեր որ շատերը երկիւղի կիրքէն մէկ վայրկենի մէջ ծերացեր են, յանկարծ մազերնին ճերմկելով:

Չէ՞ք գիտեր որ շատերը սաստիկ ուրախութեան պատճառաւ յիմարանոցներն երթալ դատապարտուելու առիթ աւեցան. և շատերն իսկ յանկարծական կաթուածով իրենց ուրախութեան առարկայն չը վայելած ինկան նուաղեցան և երկարատև հիւանդութիւն կրեցին կամ խսկոյն մեռան.

Ո՛հ, և մինթէ ամեն օր պէտք չէք տեսնէր ու սակաւ մը ցանկասէր վաւաշոտներ, որ գերեզմանէ փախած կմախք դարձեր էք.

Եթէ բժշկական տարեգրութիւնքը քննենք, աշխարհի մէջ անժամանակ մեռնողներուն հարիւրին ինսունը հեշտախտութեան պատճառաւ պիտի գտնենք:

Ցանկութեան կիրքը գրգռելով, կամ լոկ հեշտական խորհուրդներով վարակելով՝ ուրիշ ամեն տեսակ կիրքերու պէս ներքին գործարանաց ընթացքը կը շփոթի. ընդհանուր ջղային դրութիւնը կը ցնցի ու կը խանգարի, այս ջղային խանգարումը երբեմն այն աստիճան կը հասնի որ հոգեկան կարողութեանց կը դպչի եւ այն ատեն գրեթէ բժշկութիւնն անհնարին կը լինի. Նորաձևութեան, մօտայի, հետեւող յիմար երիտասարդք եւ երիտասարդուհիք, կարծես թէ իրենց պարծանք մի է ջղային հիւանդութիւն ունենալն՝ մօտայի կարգն են դասած. իրենց ուրիշ թեթևսոլիկ յիմարութեանց պատմութեան հետ նաև ջղային հիւանդութիւն ունենալնին ալ կ'լսեն պարծանօք ու չէ թէ զղջմամբ. որով մարդուս կարեկցութեան զգացումն ալ կը սպառեն.

Հեշտասիրին երակները կուսին, արիւնը արտաքոյ կարգի ջերմութիւն մը կը ստանայ, որուն բաբախիւնը երագելով կենսական շարժման մէջ շփոթութիւն և անկարգութիւն կը ձգէ, աճումը կը փութացնէ. մարսողութեան կամ սննդական գործողութիւնը արտաքոյ կարգի կը կատարուի, սննդական հիւթերը համարեա թէ կը տոչորին քան թէ կը զտուին, որով ըստ բաւականին սնունդ չառնելով և միւս կողմէն ալ շարունակ հեշտասէր խորհուրդներով սպառելով օր յաւուր կ'անկանի վատթարութեան մէջ.

Բղջախոհութիւնը այնպիսի կիրքերէն մէկն է, կամ թէ ըսենք կիրքերու բովանդակութիւնն է, որ կեանքը իւր արմատէն և բուն աղբիւրէն կ'ապականէ. քանզի մարդուն կենսական ոգին կը ցամքեցնէ, այն ազնիւ հիւթը, զոր քիչ մը վերը ձեզ յայտնեցի և ցոյց տուի որ ինչպէս մարմնոյ ամեն մասանց մէջ մտնելով զայն կը սնուցանէ և կը զօրացնէ. ահա բղջախոհութիւնը այնպէս կը շարժէ և կը շփոթէ մարդկանը ներքին զգայարանքներն որ այս նուրբ և ուեղէն կենդանարար հիւթը կ'արգիլէ իւր բուն պաշտօնէն, չի թողուր որ զձեզ սնուցանէ, այլ ձեր յիմարութիւնը հաճեցնելու համար կը խոտորի իւր պաշտօնէն և ձեր կեանքը կը ցա-

մաքեցնէ և կը չորացնէ ։

Դուք, Թշուառ որդեակք իմ, դուք ապիրատութեամբ կը յաճախէք այդ չարութեան մէջ և կ'աշխատիք յագեցընել ձեր կիրքը, բայց պիտի սոսկայք երբ գիտնայք որ կիրքերը յագենալ չեն գիտեր, քանի գրգռես այնչափ կ'աճին ու անուանդ կուզեն, դուք ձեր յիմար կրից հետեւելով և յաճախելով օրէ օր առանց ձեր զգալուն 'ի ներքուստ կը մաշիք եւ ձեր մարմինը դիւրապատրաստ կ'ընէք դժուարաբոյժ ախտերու, այլ և այլ բորբոքմանց, թոքախտութեան, ապշութեան, խլութեան, կուրութեան, ախտդանատութեան, յօդուածացաւութեան, և այլն ։ Այս մէն մի ցաւերը ոչ միայն կը փչացընեն զձեզ այլ եւ ձեր մարմինը մաս առ մաս կուտեն ։

Եթէ մէկը դանակն առած գայ եւ ըսէ ձեզ, թէ «Ամենակարեւոր պէտքի եւ մեծ օգտի մի համար ձեր մարմինէն փոքրիկ կտոր մի պիտի փըրցնեմ». դուք ամէն հնարք 'ի գործ կը դնէք չը թոյլատրելու և կը փախչիք ։ բայց ինչու ուրեմն կիրքերէն ալ չէք փախչիր, եւ միշտ նոյն թելադրութեանը կը հետեւիք, որք ամէն մէկ անգամին ձեր հոգիէն ու մարմինէն ձեր սիրուն առողջութենէն եւ կեանքէն մեծամեծ մասեր կը փրցնեն ։

Ցանկութիւնը, բղջախոհութիւնը, վաւաշ և պագշոտ սէրը վերջապէս ամէն տեսակ հիւանդութեանց պատճառ է ։ Այս սոսկալի կիրքը մարդուն բանականութիւնը առնելով անոր մտաց գեղեցիկ լուսաւորութիւնը կը մթացնէ և անասուններէն աւելի վատթարացնելով՝ մարդս չը վայլած անբանական գործերու, սոսկալի մեղքերու եւ ամենավնասակար միջոցներու ձեռք զարնել կուտայ, յագուրդ գըտնելու համար ։ Այլ ափսոս, ինչ օգուտ որ չէք գիտեր թէ ինչեր կը զոհէք ձեր անձէն, ձեր ոյժէն, ձեր բոլոր զգայարանքներէն ։ ցաւալի է որ չէք գիտեր թէ ամէն մէկ անգամին որ դուք ձեր այդ կրից թելադրութեան կուրօրէն կը հետեւիք, քանի անգամ որ ձեր սոսկալի հաճոյքը կը կատարէք, այն ամէն անգամին ձեր առողջութեան և կենաց ծածը կը քամէք ։ Քանզի ոչ թէ միայն գործով, այլ և խորհրդով անգամ երբ կը մեղէք և ձեր երեւակայութիւնը հեշտական պատկերներով կամ խորհուրդներով կը զբաղեցնէք, նոյն այն ներքին շարժութիւնները և կրից յուզումը մի և նոյն կերպով կը պատահի ։ այդ վիճակին մէջ ալ ջղային ձգտումը, կատաղը (կեռխչմիչ) հեշտական մեղկութեան և ներքին տագնապի մը նշանները են ։ Այսպիսի խորհուրդներով զբաղեալ անձին երակները ու ջղերը կը թուլնան ներքին անօթոց ամրութիւնը կը լուծուի և սակաւ առ սակաւ նոյն կենդանական ոգիքը ինքնին ալ կը կորսուին, որով նոյն վնասակար հետեւութիւնները յառաջ կուգան, հապա որչափ առաւել՝ երբ անխոհեմաբար գործնական սպառումն ալ խորհրդոց հետ լծակցին ։

Բայց անտարակոյս, գործը խորհրդոց հետեւանքն է, քանի որ մէկը վատ խորհուրդներու անձնատուր կը լինի, հարկաւ յարմար առիթ պիտի որոնէ և օր մի երբ պատեհութիւն ունենայ՝ զայն 'ի գործ պիտի դնէ ։ Ուրեմն գլխաւոր զգուշանալու բանն այն է որ մարդ իւր խորհրդոց չը ներէ և թոյլ չը տայ որ իւր կիրքերն յուզող բաներու վերայ մտածէ. զի այն ինքն է բուն մեղաց առաջնորդը, և անոր համար է որ մեղաց զուգակշիռ ծանրութիւնն ունի. վասն զի «Ցանկական խորհրդով կնոջ նայելը շնութիւն

լինել է. և վասն զի սրտէն ելած խօրհուրդներն են որ մարդը կը պղծեն»։

(Հոր—նոկո—բէ—ն.)

ԱՅՍ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՍ

ՉԵՄ ԿԱՐՈՂ ԹՈՂՈՒԼ

Երբ արբեցողի մը ասենք թէ այդ չար սովորութիւնը թող. երբ հայհոյչի մը ասենք թէ մի՛ հայհոյեր. երբ բարկացողի մը ասենք թէ մի՛ բարկանար. վերջապէս երբ ամեն տեսակ մոլիներու և մեղաւորներու կարեկցաբար խրատ տրուի թէ այդ արածդ քեզ վնասակար է, մի՛ հետեւիր այդ մոլեկան սովորութեանդ, աշխատէ եա կենալ այդպիսի վնասակար բաներէ. նոքա մեծաւ մասամբ կը պատասխանեն. Այս սովորութիւնս չեմ կարող թողուլ։

Նաև խեղճ պատասխան մի է այս, եւ պատասխանողի յետին ստորնացած խեղճութեան նշան. քանզի այս պատասխանով նա կը վկայէ որ ոչ այնչափ բռնած՝ որչափ որ բռնաւորէ մի բըռնուած է. զոր չեմ կարող թողուլ՝ ասելը կը նշանակէ որ անբաժան կերպիւ կապուած է նորա հետ։ Այսպիսին այնպիսի բանի մի հետ որ թէ բազմաց վկայութեամբ թէ օրինակներու յաճախութեամբ և թէ նոյն իսկ մեզի իւր գիտակցութեամբ կը հաստատեն թէ վնասակար է։

Արդ այսպիսի վնասակար լինելը հաստատուած բան է մի է որ կ'ասէ թէ չեմ կարող զատուիլ. ինչ որ ասել է թէ, Զիս կողոպտող եւ չարաչար իրեն ծառայեցնող աւազակը չեմ կարող թողուլ. նոյնը ասել է. Այս սովորութիւնս չեմ կարող թողուլ։

Չեմք գիտեր թէ պատիւ, շնորհ և աշխատութիւն սիրող մարդիկ ինչպէս կը զիջանին այս նուաստութիւնն յանձն առնուլ, և չեչին ու վնասակար սովորութեան մի գերի լինիլ, մինչդեռ բարի խրատի մի հնազանդիլ չեն կամիր. օգտակար օրէնքի մի հպատակիլը ազատութեան հակառակ կը համարին. չեմք գիտեր թէ ինչու քաղաքական դերութեան նեւթականներն ունեցած ամենամեծ ատելութիւնը չեն զգար. ինչու չեն ուզեր հասկնալ թէ «Որ գործէ զմեղս ծառայ է մեղացն»։

Մարդկան մէջ այսօր բիւրաւոր մոլութիւններ կան. ինչպէս են արբեցութիւն, շուայտութիւն, հեշտասիրութիւն, նրբասիրութիւն, խաղամոլութիւն, օտարաց նմանելու մոլութիւն, և այլն։ Այս ամենը կան մարդկան մէջ, նա մանաւանդ մեր ազգին մէջ, որոնք իրենց տուները կը քանդեն և խաղաղութիւննին կը վրդովեն. այս ամենը չարիք են և մարդիկ այս ամենուն չարիք և վնասակար լինելը գիտնալով հանդերձ ամեն օր կը հետեւին և ով որ համարձակի զիրենք զգուշացնելու, ցաւօք սրտի կը պատասխանեն թէ չեմք կարող թողուլ։

Մեր խօսքը առ այժմ այս յայտնի մոլութեանց և մեղաց վերայ չէ. զոր ամեն ոք կը դատապարտէ, նոյն իսկ մոլին ալ զօրաւոր կերպիւ կը հերքէ, այլ այնպիսի սովորութեան մի վերայ է, որ դժբաղդաբար մոլութիւն համարուած չէ, այլ քաղաքավարութեան կարգ անցած է. այն է, ծխախոտ գործածութիւնը, զոր ողջամիտք այսօր մեծ մոլութեանց կարգը կը դասեն։

Արդարեւ մոլութեան կարգն անցած է այսօր ծխախոտը իւր խիստ անկանոն գործածութեամբը։ Ծխախոտը իւր շատ մի զզուելի և վնասակար արդիւնքներովը հանդերձ մեր օրերը խիստ

ընդարձակ ծաւալեցաւ։ Ատեն մի ամօթ կ'ազդէր, այսօր պարծանք կը համարուի։ Կար ժամանակ, որ տղայն՝ Թէ և զաւկի տէր, բայց իւր հօրը քով չէր ծխէր և մեծերէն ամչնածութեամբ կը խուսէր. այսօր հայրը՝ որդւոյն, Թէեւ պատանի կամ մանուկ, ծխախոտ կը տայ, և մեծերը փոքրերուն ծուխ կը հրամցնեն, որով կը յայտնեն Թէ ցնդական ծուխի արժէքն ունի իրենց պատիւը.

Կար ժամանակ՝ յորում ծուխ գործածող կանայք անպարկեշտ կը համարուէին. և յիրաւի, ծխող կնիկը խիստ անշնորհք կ'երեւի և զզուանք կ'առնէ խոհուն տեսողաց։ Մոլի կանայք իրենց այդ մոլութիւնը արդարացնելու և այլոց առջեւ անբասիր լինելու համար չը գիտեմ՝ ի՛նչպէս յաջողեցան խիստ պարկեշտ ընտանեաց մէջ ալ մացնել և յարգելի բան մի երեւցնել։ Գիտէինք որ ընդհանրապէս բոլոր մոլիներուն բնութիւնն է այս, որ կուզեն և կ'աշխատին իրենց մոլութիւնը տարածել, հասարակաց ընել, որպէս զի իրենք միայն չերեւին և չանարգուին. և յաջողելու համար ամէն ճիգ կը Թափեն և ամէն հնարք կը գործածեն, վա՜յ այնպիսի անփորձ և անխոհեմ Թշուառներուն որ մոլիներու որոգայԹին մէջ կ'անկանին։ Գիտէինք, կ'ասեմ, մոլիներու այս բնութիւնը բայց այսչափ յաջողութիւն գտնելն արդարեւ զարմանալի է . . . . . ։

Թերեւս ըսուի Թէ, — Ծխախոտն ինչու մոլութիւն պիտի լինի — , կը պատասխանեմ Թէ. Ամէն բանի չափազանցութիւնը մոլութիւն է, և որովհետեւ ծխախոտի գործածութիւնը այսօր խիստ անսահման և կարի չափազանցեալ է, միանգամայն եւ վնասակար ևս, արդէն մոլութիւն է։

— Եւ ի՛նչ է նորա վնասները.

— Ծխախոտի այժմեան գործածութիւնը վնասակար է, նախ՝ վասն զի տարապարտ տեղը մարդկան աշխատանաց և քրտանց մէկ մասը գրաւած է մինչեւ անգամ՝ նորա կենսական պիտոյից կարեւոր եղածներն զրկելով. քանզի կայ մարդ, որ անօԹի կարող է կենալ, բայց առանց ծուխի ո՛չ։

Երկրորդ՝ ծխող մի երբ ծուխ չունենայ եւ եԹէ նոյն միջոցին գտնելը դժուար լինի, տխուր, անհանգիստ և վհատեալ կը մնայ, եւ իւր մոլութիւնը յագեցնելու համար ամէն անկէ կրակի ծուխ խնդրել և այլոց դժգոհութիւն պատճառել։

Երրորդ, առհասարակ ատամները կը սեւցնէ, եւ մարդուս շնչոյն ժահահոտութիւն մի տալով այլոց զզուանք ու դժգոհութիւն կ'առԹէ։

Չորրորդ, ծխախոտը իւր Թունաւոր և ադոյին յատկութեամբը մարդուն ջիղերը Թուլացնելով, ստամոքսը գրգռելով եւ տկարացնելով ներքին հիւԹոց բարեխառնութիւնը խանգարելով կը վնասէ և զանազան ախտաւորութեանց կ'ենԹարկէ, մանաւանդ տեսակ մի տառապեցուցիչ հազով կը տանջէ։

Հինգերորդ, ծխուած սենեկին մէջ ննջելով Թէ ծուխին հոտը և Թէ ծխախոտին արտաշնչութիւնը շնչելով ոչ Թէ միայն այլ եւ այլ հիւանդութիւններ, այլ նաեւ հերանԹափութիւն և մինչեւ իսկ երախայից մահ կը պատճառէ։

Ծխախոտին այսչափ և Թերեւս անկէ աւելի վնասներուն նայելով իւր օգուտն խիստ աննշան է և այն ալ այնպիսի մոլեկան գործածութեամբ չէ. այլ իբր դեղ՝ հարկը պահանջած ատեն գործածելով և Թողլով։ Ինչպէս են նաև բոլոր ըմպելիքներն, զորս մարդիկ այսօր իբր զուարճութիւն կամ

մխիթարութիւն կամ քաղցրախօսութիւն կը գործածեն, որոց կարգն է մեր երկիրներու նկատմամբ սուրճն ու թէյը։ Սոցա ամենուն առաջքը կարող են առնուլ բժիշկք. եթէ իբր դեղ պատուիրած ատեննին գործածութեան սահմանն ալ պատուիրեն։ Զարմանալի չէ՞, որ մեր ուրիշ դեղեր մեր հիւանդութիւնը առողջանալէն վերջը չենք գործածեր, իսկ զանազան ոգելից ըմպելիքներ և ծխախոտը, որք շատ դեղերէ աւելի զօրաւոր են, շարունակ կը գործածենք։

Բժշկական դեղերէն մէջ սովորաբար մահացու թոյներ կան, որք երբեմն հիւանդութեան նկատմամբ չափովն ու ժամանակովը գործածուելով մահուանէ կ՚ազատեն. բայց անժամանակ և չափէն խիստ փոքրիկ մաս մի աւելին մահ կ՚առթէ. կը խոստովանիմք որ ծուխն եւս եթէ այսպէս մասնաւոր քանակութեամբ, հիւանդութեան մի ատեն միայն ուրիշ դեղերու պէս գործածուելով առողջանալէն յետոյ թողուի, օգուտներ ունի. թէ եւ նորա տեղը ուրիշ դեղեր ալ կարող են գործածուիլ։

Ծխախոտի գործածութիւնը իր յառաջդիմութեան առջեւ զօրաւոր արգելք մի չը գտնալով հետզհետէ յառաջացաւ և առանց սահմանի մէջ պարփակուելու մարդկութեան ամեն տեսակ անդամներու մէջ մտաւ և խակոյն տիրեց։

Քանզի ինչպէս բնական էր, ծըխող աշխարհականն քահանայանալով մտաւ եկեղեցականաց մէջ. վարդապետք չէին ծխեր, նոքա եւս նոյնպէս սկիզբէն ուսած լինելով և թողուլ չուզելով կամ թողլու դժուարութեանց առջեւ յաղթուելով վարդապետանալէն վերջն ալ սկսան գործածել, և ամեն բարձրաստիճան եկեղեցականաց մէջ անցամ մտնելով դժգոհութեանց, գայթակղութեան եւ չար օրինակ լինելու պատճառ եղան. այսչափ ընդհանրական ծաւալումն ալ այսպէսով յառաջացած է։ Քանզի մանուկը տեսնելով որ իր ծնողքը ամենայն ախորժանօք ծուխը ներս կը քաշէ, և դուրս տուած ատեն զուարճալի, կամ թէ ասեմք, ծաղրելի երեւոյթ մի կ՚ունենայ, կը սկսի ինքն ալ մանր մանր փորձեր ընել և այսպէս կ՚ուսանի. պատանին և երիտասարդը տեսնելով որ բաց ՚ի իր ծնողքներէն, իւր հոգեւոր հայրերն ու ուսուցիչներն ալ կը գործածեն. ուստի շարունակ ամեն տեղ ամեն անձի վերայ մի և նոյն բանը մի և նոյն կերպով տեսնելով բնական հակամիտութիւն մի կ՚ունենան նոցա նմանելու, մանաւանդ նոցա վատ օրինակին քան թէ լաւին. և ահա այս կերպով մանկունք և պատանիք իրենց փափուկ հասակէն կը սկսին ծխելու վարժուիլ. և յանգէտս իրենց մարմինը կը թունաւորեն. և հաւակ այսպէս սեւ-սեւ ատամներու, ախտաւոր թոքերու, շնչարգելութեան, կրծոց ճնշման, տատանեցուցիչ հազերու և այլ հիւանդութեանց տէր կը լինին. և նոյն իսկ այս վտանգաւոր ժամանակին եթէ խրատես որ թողուն իրենց այս մոլութիւնը սխալ պատասխանեն թէ՝ կ՚ուզեմ, կ՚աշխատիմ թողուլ բայց չեմ կարող։ Թէպէտ կան շատեր ալ, որ իրենց մոլութիւնը միայն պատճառաբանութեամբ արդարացնել կուզեն և մոլութեան կարգը չեն ուզեր դասել. շատերն ալ յամառ կամակորութեամբ խրատի և յանդիմանութեանց չեն ուզեր անսալ, այնպիսեաց հետ խօսելու ոչ իսկ ունիմք և ոչ ալ խօսքերնին լսելու գլուխ։ Մեր խօսքը թող լինի անոնց հետ որ սրտանց կուզեն թողուլ, բայց ակամայութեամբ կը հաւատան թէ չեմ կարող թողուլ։

([illegible])

ԱՌ ՕՐԱԳԻՐՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Գոհ եմք որ դիտողութիւն կընէք Սիօնի խմբագրութեան մէկ տեղեկութիւն հրատարակելուն վերայ. ուրախ եմք որ վարժարանական իշխանութեց հայրական լինելն ու լինելիքը ճանաչելով՝ ի նոյն կը յորդորէք. բայց մեք եւս կը փութամք յայտնել ձեզ թէ, վարժարանիս տեսչութեան իշխանութիւնը արդէն հայրական է, զոր գործադրած է, կը գործադրէ եւ թերեւս պիտի գործադրէ. եւ իւր այս հայրական իշխանութիւնը գթութիւնը ներողամտութիւնը, անյիշաչարութիւնը առհասարակ ամեն աշակերտի վերայ մի օրինակ է։

Դպրոցական կանոնաց չը հնազանդող աշակերտաց շատ անգամ ազդարարութիւն կ'ընէ, խրատ, յորդոր, սաստ, յանդիմանութիւն թէ առանձին եւ թէ հրապարակաւ, դպրոցական սահմանեալ պատիժներ եւ այլն կարգաւ ՚ի գործ կը դնէ՝ բարեխառնեալ քաղցրութիւ սիրով եւ գթութեամբ. այս ամենը լըրանալէն վերջը երբ աշակերտի մի ներքը կատաղութեան կը հասնի Տեսչութիւնը կը ստիպուի այլ միջոց գործածել յօգուտ իւր խնամոյ յանձնուած սիրելի զաւակաց։ Սահմանը լրիկ ճամբելը հերիք չէ ուղղութեան համար, քանզի նորա ուզածն ալ այդ է, որ եւ այլոց եւս գայթակղութիւն ու չար օրինակ է։

Տեսչութիւնը արձակուող աշակերտաց, որ լոկ դպրոցական օրինի աւարտած են իրենց ուսման շրջանը, վկայագիր կը տայ. իսկ որք առանց աւարտելու որ եւ իցէ մնոտի պատճառներով արձակուին կը կամին նոցա վըկայական չը տար. հապա այնպիսեաց, որք դպրոցի Տեսչութեան ՚ի գործ դրած բոլոր Հայրական, եղբայրական եւ քրիստոնէական միջոցներն կ'արհամարհեն, որք փոխանակ անսալու որդւոյն ալէս իրենց թերութիւնքն զգալու եւ յետ դառնալու, ընդհակառակն իրենց զղջալու համար տրուած միջոցներն եւս կ'անարգեն եւ առաւել եւս կը կամակորին, որք եւ ամեն ազդու միջոցներն առ ոչինչ կը գրեն. արդ քանի որ Տեսչութիւնն այլոց եւս բարոյ ուղղութեան պարտական է, այսպիսի պարագայից մէջ ի՞նչ կարող էր առնել ՚ի խրատ եւ յուղղութեան ստահակին եւ յօրինակ այլոց։

Սիօնի խմբագիրը նոյն յօդուածը հրատարակեց ոչ եթէ նոյն պատանւոյն, զոր հոգւով չափ կը սիրէ, առաւել եւս անուղղայութեան համար, այլ որպէս ցաւօք հրատարակեց, որ նոյն պատանին ուղղուի եւ իւր յաջորդ ուղղովն եւ բարի կեանքովը սուտ հանէ զխմբագիրն եւ յօդուածը, յօգուտ իւր անձին եւ յուրախութիւն մեզ։

Զայս եւս կամիմ ՚ի յաւել ածել ձեզ, ահաւասիկ հրատարակի մէջ յանցաւոր եւ լուծեալ Սարկաւագ մի կայ, որուն անունը եւ յանցանքը չը հրատարակեցաւ Սիօնի մէջ. աղէ այժմ կը տեսնէ՞ք նորա դարձը ուր հասաւ։

Անառակ որդւոյ Աւետարանական առակի իմաստը կը յուսամ թէ հասկացած եմք. զղջուն սիրտ կրող ու ինքնին դարձի եկող՝ իւր յանցաւոր լինելը ճանչցող, խոստովանող եւ ամեն տարաշխարանաց իւր անձը պատրաստական դառնող եւ այլ եւս չանկանելու խոստումն տուող հեզ ու խոնարհ յանցաւոր մի քրիստոնէական օրինաց առջեւ ներողութիւն կը գտնէ, բայց յանցանքին վերայ յամառողը դիւաց կարգը կը համարի......

Հետեւեալ Մահարձանը Կ. Պոլսէն ղրկուած է մեզ հրատարակելու խնդրանօք։

ՄԱՀԱՐՁԱՆ

ԱՌԱՔԻՆԵԱՑՆ ՄԱՐԻԱՄԻՆ ՕՐԻՈՐԻ
Յ. ԹՈԳԱԳԼԵԱՆ

ՆԱԽԱԾԻԼՆ ԾԱՂԻԿ

ՄԿԾ. ՄԱՀՏԵՍԻ ՅԱԿՈԲ ԷՖԷՆՏԻ ԹՈԳԱԳԼԵԱՆ
ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՏԱՆՆ,
ՆՈՒԷՐ ԽՈՐԻՆ ՄԽԾԱՐԱՆՕՔ

ԵՂԵՐԳ

Փթթնոտուրդ մինչ ծաղկէիր դու շուշան
Ի մեծ գերդաստան ազնիւ տոհմի Թոգագլեան,
Սուրբ կրօնի և Հայրենեաց ջերմ սիրով
Ծըլեալ էր քոյդ ծնողաց խնամով.
Իբրև տունկ 'ի Թաւփս վարդից դալարեալ,
Վերհանեիր 'ի քոյդ դաշնակ գեղեցիկ։
Ոչ ժանդ հիւսիս խռովեաց զքեզ յարմատոց,
Ոչ 'ի բողբոջ որդ մահ զանգուած իւր հասոյց.
Է՞ր վաղաժամ այսպէս թռեար դու յեթեր
Եւ հոսեցին արտօսր աղի 'ի յերկիր։
Հոյլ զուարթնոց սուրբ հրեշտակաց հոգեղ պար
Նախանձեցան ընդ քո գեղգեղ դաշնահար։
Առին ըզքեզ տանել 'ի Թուփս Եդեմայ
Անդ ճռուողել 'ւ օրհներգս համել Ադամայ։
Զի չեւ գարուն երից հնգից լըցեր պըսակ
Ի քո ճակատ եւ գեղանի 'ի հասակ
Նարօտ հիւսէր, եւ ոսկեհուռ կենաց առդ,
Ընդելուզէր յադամանդեաց 'ի փողփող.
Զեւ փորձ պատիր եւ նենգ նանիր աշխարհիս

Զօրէն փչոց զքեզ հեղձնուլ 'ի մտախս ,
Տարան զքեզ յեԹեր կապոյտ Եղիւսեայն
Ի յարդգողն անդ աստեղցն 'ի չար ԱրծաԹեայ ·
Յաւէրժ սիրուն ամբիծ դու կոյս Մարիամիկ
Թռեար 'ի գիրկս որ շատ կուսեց անմեղիկ
Խընամակալ ու Աստուածորդւոյն եղեւ մայր ·
Խնդրէ յորդւոյն Թեւատարած ամն յամայր
Որ ակն յերկիր ածէ 'ի կոյս իւր գըԹով
ՄըխիԹարել զքո ծընողս խընամոտ
Խնդրէ նա եւ եղբօր և քերցդ սրեւ շատ
Որ քո զոսկերս լացին Թայլն խանդղատ :

Մեսրոբ ·

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս 6 ին, անգլիոյ Կառավարիչը Յօպպէ գնաց, այն տեղի համար Գաղ մագամ ընտրելու, և 9 ին վերադարձաւ :

— 8 ին, երեկոյեան ժամը 10 ին քաղաքս հասաւ անգլիոյ դեսպանը Մահամմէտ Խէյրուլլահ էֆէնտին. որուն ընդ առաջ դիմաւորելու փուԹացեր էին վանորէից Թարգմանք հանդերձ պահակօք (եասախճի) ԿառավարուԹեան կողմէն Հազարապետ մի զապԹիէներով :

— Ռամալլայի Յոյնք իրենց միաբանուԹեան հետ հաշտուեցան :

— Բ. Դռնէն եկած հրամանին համեմատ ԿառավարուԹիւնը սկսաւ այսուհետեւ Ռամազանի օրերը ցերեկները տեսնել դատերը, քանզի առկէ յառաջ գիշերները կը տեսնէր :

— Աշնան ամպերը Թէպէտ մեր երկնից կապուտակ կամարի վերայ կը սահին, բայց քաղաքիս մէջ տակաւին անձրեւ չեկաւ, իսկ շրջակայքը կը լսեմք որ առատ անձրեւ եկած է. մինչ զի Երուսաղէմի արեւելեան կողմը երկու փոքր տղայք հեղեղի յորձանաց զոհ եղած են :

Ամսոյս 22 ին քաղաքիս Գերմանիոյ ԿայսրուԹեան Հիւպատոսարանի Աւագ Թարգման և քարտուղար Հայազգի Մեծ. Պ. Սրապիոն Յ. Մուրատեան, Սաքսոնիայի Մեծ դքսական սպիտակ բազէի կարգի, ասպետական երկրորդ աստիճանի շքանշանը ընդունեց :